

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՔԱԹՕՐՅԱԿԻ  
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՕՐՎԱ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ

29.04.2023

Միրելի՛ պուճեցիներ

Շնորհակալություն եմ հայտնում բոլորիդ՝ թե՛ անհատներին, թե՛ համայնքապետարաններին, թե՛ պետական ու մասնավոր կազմակերպություններին, կրթական հաստատություններին, խոշոր տնտեսվարողներին՝ այսօրվա համապետական շաբաթօրյակին ակտիվորեն մասնակցելու համար:

Նման նախաձեռնությունները, հիրավի, հերթական առիթն են հայրենի եզերքի հաղեպ սերն ու հոգատարությունն արտահայտելու համար: Իհարկե, շատ ցանկալի է, որ մեր հայրենիքն ու մերձակայքը մաքուր պահելու համար ջանքերն ամենօրյա լինեն՝ նախևառաջ չաղտոտենք մեր շրջապատն ու պահպանենք մաքրությունը, վնաս չտանք շրջակա միջավայրին:

Քանի որ այս օրն համընկավ Հայաստանի Հանրապետությունում նշվող Քաղաքացու օրվա հետ, շնորհավորում եմ բոլորիս նաև տոնի կապակցությամբ խորհրդանշական է, որ հենց շաբաթօրյակին ակտիվ մասնակցությամբ ու շրջապատի, բնության հանդեպ պատասխանատվությամբ ապացուցեցիք, որ երկիրը սիրող ու նվիրյալ քաղաքացիներ եք: